ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«23» մարտի 2020թ. № 104

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միքայել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 0,111 հեկտար մակերեսով հողամասը ըստ անշարժ գույքի (հողամասի) 2020 թվականի մարտի 19-ի առուվաճառքի պայմանագրի փոխանցվել է Հովհաննես Նորիկի Թումանյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Հովհաննես Նորիկի Թումանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Նորիկի Թումանյանին առուվաճառքի պայմանագրով փոխանցված՝ Սպիտակ համայնքի Պանրագործների թաղամասում գտնվող 0,111 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Պանրագործների թաղամաս, թիվ 245» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 23
ք.Սպիտակ